Տ. ԹԷՈԴՈՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ



Տ. Թէոդորոս եպիսկոպոս Զաքարեանը (աւազանի անունը Նորայր), ծնուել է 1969-ի դեկտեմբերի 14-ին, Երեւանում։

1976—1987 թթ. սկզբնական կրթութիւնն ստացել է Երեւանի թիւ 11 միջնակարգ դպրոցում։

1987-ին ընդունուել է Երեւանի Ճարտարագիտական համալսարանի ռադիոտեխնիկայի բաժին։ Նոյն տարում զօրակոչուել է զինուորական ծառայութեան։ 1990-ից շարունակել է կրթութիւնը։

1992 թ.-ին ընդունուել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարան։

1993 թ. օգոստոսի 14-ին ձեռամբ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուել է սարկաւագ։

1995-ին աւարտել է Ընծայարանի քառամեայ կրթութիւնը եւ ձեռնադրուել կուսակրօն եկեղեցական՝ վերակոչուելով Տ. Թէոդորոս Աբեղայ։

1996—2006 թթ. եղել է Սբց. Թարգմանչաց երկրորդական վարժարանի տեսուչ։

2005 թ. յունիսի 24-ին ի ձեռաց Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ստացել է վարդապետական չորս աստիճաններ եւ լանջախաչ կրելու իրաւունք։

2006—2017 թթ. ապա 2020—2023 թթ. եղել է Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ։

2018-ից մինչ օրս Մարտիկեան թանգարանի տեսուչն է։

2020 թ. սեպտեմբերի 26-ին ստացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի։

2023 թ. հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ձեռնադրուել է եպիսկոպոս։

Միաբանական ընդհանուր ժողովում տարբեր տարիների ընտրուել է նոյն ժողովի ատենապետ, ինչպէս նաեւ Ս. Աթոռի Տնօրէն ժողովի անդամ։ Հանդիսանում է նաեւ Գանձատան յանձնախմբի անդամ։